ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ *

ՀՏԴ 355.1 *DOI: 10.52063/25792652-2023.2.17-66*

ԴԱՎԻԹ ԹՈՐՈՍՅԱՆ
Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքագիտության ամբիոնի հայցորդ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
Davit.Torosyan@ysu.am
ORCID: 0009-0005-9389-7447

Սույն հոդվածի նպատակն է վեր հանել զինծառայողների քաղաքական գիտակցության խնդիրների փոփոխությունները արդի տարածաշրջանային և գլոբալ զարգացումների համատեքստում:

Աշխատանքի խնդիրը ՀՀ զինծառայողների քաղաքական գիտակցության վերլուծությունն է՝ հաշվի առնելով 44-օրյա պատերազմից հետո ստեղծված ներքաղաքական և արտաքին նոր միջավայրի առաջ քաշած մարտահրավերները:

Աշխատանքը շարադրված է փաստերի և տեսությունների համադիր քննությամբ, պատմական, պատմահամեմատական և պատմաքննական վերլուծության մեթոդների և սկզբունքների կիրառմամբ:

Կատարված ուսումնասիրության արդյունքում կարելի է պնդել, որ դեռևս երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդող ժամանակաշրջանում զինծառայողների քաղաքական գիտակցության հիմնախնդիրը, ինչպես նաև քաղաքական և ռազմական վերնախավերի հարաբերության ուսումնասիրությունը առանձնակի կարևորվել է արևմտյան և խորհրդային աշխարհակարգերում: Սառը պատերազմից և ՀՀ անկախության հռչակումից հետո մեզ համար վերոնշյալ խնդիրները նույպես առաջին անհրաժեշտության տիրույթում են: Կատարված հետազոտության ընթացքում ի հայտ է բերվել հայկական իրականության մեջ թեմայի նկատմամբ հետազոտական համայնքի կողմից հետաքրքրության պակասը և, ըստ էության, թեմայի մշակվածության ոչ բավարար աստիճանը, ինչն էլ, իր հերթին, հանգեցնում է մի շարք խնդիրների «գետնի վրա»՝ իրական կյանքում:

Հայաստանյան իրականության և ՀՀ օրենսդրական ոլորտի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա են մի շարք բացեր, որոնք հրատապ վերանայման կարիք ունեն:

Հիմնաբառեր՝ *զինծառայող, բանակ, զինված ուժեր, գիտակցություն, քաղաքական գիտակցություն, ռազմաքաղաքացիական իշխանություններ, Հայաստանի Հանրապետություն:*

Նախաբան

Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ ՀՀ) շուրջ երեք տասնամյակ գտնվում է փաստացի չավարտված, ժամանակ առ ժամանակ ակտիվ ռազմական գործողություններով կամ տեղամասային թույլ և/կամ ուժեղ էսկալացիաներով ուղեկցվող պատերազմական իրավիճակում: Վերնշյալ հանգամանքը, միջին

* Հոդվածը ներկայացվել է 09.05.2023թ., գրախոսվել՝ 11.07.2023թ., տպագրության ընդունվել՝ 31.07.2023թ.:

վիճակագրական այլ պետությունների հետ համեմատած, պահանջում է բնակչության համեմատ ավելի մեծ բանակ, ավելի շատ միջոցների և ռեսուրսների ներգրավում, հասարակական ամենատարբեր շերտերի ավելի ինտենսիվ հարաբերություններ զինված ուժերի (Հայաստանի դեպքում՝ առավելապես բանակի) և զինծառայողների հետ:

Ելնելով այն հանգամանքից, որ ՀՀ-ում մշտական բնակչությունը շարունակաբար կրճատվում է, այդ թվում՝ պարտադիր զինակոչի ենթակա արական անձնակազմի քանակը, իսկ իգական սեռի ներկայացուցիչների ծառայությունը զինված ուժերում չունի պարտադիր բնույթ, պարզ է դառնում, որ ՀՀ զինված ուժերում աստիճանաբար ավելի մեծ ծավալներով են ներգրավվում և/կամ պետք է ներգրավեն պայմանագրային զինծառայողներ, որոնք էլ, լինելով ոչ կադրային զինվորականներ, այս կամ այն քաղաքական գաղափարախոսության, կուսակցության և այլ ֆորմալ կամ ոչ ֆորմալ խմբերի անդամներ, աջակիցներ կամ հարող անձինք կամ էլ գտնվելով նրանց գաղափարական-գիտակցական ազդեցության ներքո, մերօրյա իրականության մեջ ավելի են կարևորում զինծառայողների քաղաքական գիտակցության ու գաղափարախոսության ուսումնասիրության դերն ու նշանակությունը, միաժամանակ նաև առաջնային պլան է բերվում հասարակության լայն շերտերի գիտակցության բարձրացմանն ուղղված գաղափարախոսական համալիր աշխատանքների անհրաժեշտությունը:

2020 թ. 44-օրյա պատերազմից հետո ծայրահեղ անհրաժեշտություն առաջացավ համապարփակ վերլուծության ենթարկել ՀՀ-ում զինծառայողների քաղաքական գիտակցության ձևավորմանը նպաստող և ազդող գործոնները:

Այդ համատեքստում նպատակ ունենք ցույց տալ զինծառայողների և քաղաքական իշխանության փոխհարաբերության վերաբերյալ առկա միջազգային դպրոցների տարաձայնությունները, ինչպես նաև գնահատել ՀՀ-ում զինծառայողների կարգավիճակի հետ կապված խնդիրները՝ նրանց քաղաքական գիտակցության համատեքստում:

Քաղաքական և ռազմական իշխանության հարաբերակցության հիմնախնդիրը

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ստեղծված նոր աշխարհակարգը առաջ էր բերել նոր մարտահրավերներ հասարակության ներսում զինծառայողների կարգավիճակի և քաղաքական գիտակցության հետ կապված:

1951 թ. ԱՄՆ-ում նախագահ Դ. Էյզենհաուերի կողմից Կոլումբիայի համալսարանում հիմնադրվում է Պատերազմի և խաղաղության հիմնահարցերի ինստիտուտը: Նշանավոր քաղաքագետ Ս. Հանթինգտոնը 1954-1957 թթ. եղել է այդ ինստիտուտի տնօրենի օգնականը: Հավաքված հսկայական տեղեկությունները նրան հնարավորություն ընձեռեցին հեղինակել իր կարևորագույն աշխատություններից մեկը՝ «Զինվորը և պետությունը. քաղաքացիառազմական հարաբերությունների տեսությունը և քաղաքականությունը» խորագիրը կրող հետազոտությունը (Huntington 7-9):

Հեղինակը իր տեսությունը կառուցում է՝ հիմնվելով ամերիկյան, ճապոնական և գերմանական փորձի վրա, նպատակ ունենալով վեր հանել ԱՄՆ ռազմավարության արտաքին և ներքին գործոնների փոխազդեցության ոլորտները:

Գլխավոր թիրախում ԱՄՆ ռազմական գերատեսչություններն են՝ հատկապես նրանց դերակատարությունը պետության ռազմավարության մշակման գործում: Իր հետազոտությունում Ս. Հանթինգտոնը եզրահանգում է, որ քաղաքական և ռազմական վերնախավերի միջև բալանսավորված հարաբերությունների կառուցումը հնարավոր է միայն քաղաքական իշխանության կողմից ռազմական վերնախավի և կառույցների նկատմամբ տոտալ վերահսկողություն հաստատելու պայմաններում: Այս մոտեցման դրդապատճառները պարզ են: Անհրաժեշտ էր թույլ չտալ

ամբողջատիրական համակարգերի կրկնությունը, երբ շատ հաճախ ռազմական վերնախավը իրեն էր ծառայացնում քաղաքական իշխանությանը (Huntington 315-345):

Ս. Հանթինգտոնը իր այս գաղափարները զարգացնում է Սառը պատերազմի ավարտից հետո՝ քննության առնելով Արևելյան Եվրոպայի երկրներում արևմտաեվրոպական օրինակով քաղաքական և ռազմական ինստիտուտների միջև նոր տիպի փոխհարաբերությունների հաստատման հիմնախնդիրները (Хантингтон):

Մասնավորապես նա վերլուծում է քաղաքական իշխանության կողմից ռազմական ինստիտուտներին ինքնավարություն տալու հարցը, միաժամանակ որպես զսպման մեխանիզմ առաք է քաշում պաշտպանական գերատեսչության ղեկավարի քաղաքացիական անձ լինելու փաստը: Հեղինակը շարունակում է գերմանացի հայտնի ռազմական տեսաբան Կարլ ֆոն Կլաուզևիցի հայտնի պնդումը, որ զինվորը ենթարկվում է պետական առաջնորդին: Հատկանշանական է, որ պատերազմների և քաղաքականության փոխներգործության մասին Կլաուզևիցի մոտեցումը մինչ օրս չի կորցրել իր արդիականությունը. «Պատերազմը քաղաքականության շարունակությունն է՝ քաղաքական նպատակներին հասնելու այլընտրանքային միջոց: Հետևաբար պատերազմը դիտարկել որպես առանձին և անկախ երևույթ, վերլուծել այն զուտ ռազմական տեսանկյունից սխալ է, ի թիվս այլ երևույթների՝ քաղաքականությունը կարմիր գծի նման անցնում է ռազմի դաշտով» (Клаузевиц 11):

Փաստորեն, որքան էլ ռազմական ղեկավարությունը կարևոր դերակատարություն ունի պետության արտաքին ռազմավարության մշակման և հակառակորդ պետությունների կողմից հնարավոր ռիսկերի գնահատման մեջ, միևնույն է՝ վերջինիս գործունեությունը պետք է խորհրդատվական բնույթ կրի:

Վերլուծելով Ս. Հանթինգտոնի առաջ քաշած դիտարկումները՝ Վ. Դենիսենկոն և Վ. Կատրանջիևը պնդում են, որ Սառը պատերազմի տարիներին ԱՄՆ ռազմաքաղաքական ղեկավարությունը, հետևելով Ս. Հանթինգտոնի առաջարկներին, էական քայլեր է ձեռնարկել երկրի ռազմաքաղաքական պոտենցիալի թարմացման և ամրապնդման համար (Денисенко и Катранджиев 47):

Վերոնշյալ խնդիրների առջև էր կանգնած նաև խորհրդային ղեկավարությունը: Հայրենական մեծ պատերազմին հաջորդող շրջանում հատուկ ուշադրության էին արժանանում զինծառայողների գաղափարական կողմնորոշման հիմնախնդիրները՝ բացառելով այլախոհության տարածումը վերջիններիս շրջանում:

Արդեն 1946 թ. հունվար և փետրվար ամիսներին հստակ ռազմավարություն էր մշակվում խաղաղ ժամանակ զինված ուժերի վերակառուցման և բարեփոխումների համար: Հենվելով Մեծ հայրենականի փորձի վրա՝ ռազմավարություն մշակողները կարևորում էին զինծայառայողների կողմից պարտքի գիտակցումը, ինչպես նաև զինվորական գործի հանդեպ սիրո սերմանումը կրտսեր սպայակազմի և շարքային զինծառայողների շրջանում (Бобкова 321):

Պատերազմին հաջորդած առաջին հնգամյակում հատուկ պլանավորում իրականացվեց՝ զինծառայողների շրջանում պրոպագանդայի և ագիտացիոն գործողությունների վերաբերյալ: Կուսակցական կառույցները իրենց ուշադրության կենտրոնում պետք է ունենային զինվորական բոլոր ստորաբաժանումների գաղափարական պատրաստության հիմնախնդիրները, որպեսզի բացառեին հնարավոր անախորժությունները: Այդ նպատակին էին ծառայում 1947 թ. կազմակերպված մարքսիզմ-լենինիզմի երեկոյան դասընթացները զինծառայող սպաների համար (Орлов 56): Հատկանշական է, որ պատերազմին հաջորդած առաջին տասը տարիների ընթացքում շուրջ 700 հետազոտություններ են գրվել կոմունիստական գաղափարախության և աշխարհակարգի վերաբերյալ: Այս աշխատությունների հեղինակների մեծ մասը նպատակ չուներ և չէր էլ կարող ունենալ զինծառայողների քաղաքական գիտակցության հիմնախնդիրները լուսաբանելու,

քանի որ այդ թեմաները գտնվում էին խորհրդային ղեկավարության անմիջական վերահսկողության ներքո (Бобкова 322):

Որոշ դիտարկումներ կարելի է գտնել խորհրդային զինծառայողների գաղափարական դաստիարակությանն ուղղված ձեռնարկներում, որտեղ հպանցիկ խոսվում է առկա խնդիրների մասին: Թեպետ պետք է նշել, որ այստեղ ևս ակնհայտ նկատելի է խորհրդային ժամանակաշրջանին բնորոշ գրաքննական ապարատի հետքը:

Հատկանաշական է, որ նման պատկերը պահպանվել է մինչև Վերակառուցման քաղաքականության շրջանը, երբ հնարավոր եղավ որոշ չափով ազատ կամարտահայտվել՝ կապված նաև Խորհրդաֆղանական պատերազմի ծանր իրավիճակի հետ:

1980-ական թվականներին Եվրոպայում մեծ հեղինակություն սկսեց ձեռք բերել անվտանգության և խաղաղության հիմնախնդիրների վերլուծությամբ զբաղվող Կոպենհագենյան դպրոցը: Նրա գաղափարական առաջատարներն էին Բարրի Բուզանը և Օլե Ուիվերը:

Բ. Բուզանը առաջ քաշեց անվտանգայնացման համակարգային գաղափարը՝ բաղկացած 3 քայլերից՝

1. Գոյություն ունեցող սպառնալիքների բացահայտում,
2. Արտակարգ միջոցառումների իրականացում,
3. Բացասական հետևանքների նվազեցում, կրկնման հավանականության բացառում (Buzan et al 18):

Փաստորեն, Բ. Բուզանը հասարակության բոլոր անհատներին դիտարկում է իբրև անվտանգության գործող դերակատարներ, որոնք գործում են ոչ թե վախից դրդված, այլ նորը կառուցելու սեփական կարողությամբ (Buzan 19):

Այս համատեքստում անվտանգայնացման հասնելու համար քաղաքական իշխանությունը կարող է դիմել արտասովոր քայլերի սեփական քաղաքացիների անվտանգային միջավայրը ապահովելու համար: Նա գերիշխանություն է հաստատում ռազմական ղեկավարության հանդեպ՝ իր ձեռքում կենտրոնացնելով որոշումների կայացման լծակը:

Կոպենհագենյան դպրոցը միջազգային անվտանգության պահպանման հիմնահարցերը դիտարկում է հասարակական դիսկուրսի պրիզմայով, իհարկե, առավելություն տալով ազատ քաղաքացու ընտրությանը և կամարտահայտմանը: Միաժամանակ, ժողովրդավարական միջավայրում կառավարությունը ավելի քիչ ջանքեր է գործադրում քաղաքացիներին անվտանգության սպառնալիքները ներկայացնելու և բացատրելու համար (Ղևոնդյան 44-45):

Հենց կոպենհագենյան դպրոցն էլ Սառը պատերազմի ավարտի և նոր աշխարհակարգի ձևավորման շրջանում ապահովեց անվտանգության հայեցակարգի նոր ընկալում՝ մարդու կամ քաղաքացու անվտանգության առաջնահերթության ձևավորման:

«Լիբերալ ժողովրդավարությունը ենթադրում է քաղաքական համակարգի ինստիտուտների ղեկավարների «ապառազմականացում» (Գասպարյան 17): Զարգացնելով Գասպարյանի մոտեցումը և վերլուծելով խորհրդարանական կառավարման համակարգեր ունեցող երկրներում քաղաքական և ռազմական իշխանությունների փոխհարաբերությունների հիմնահարցերը՝ Գ. Մուրադյանը իր հոդվածում եզրակացնում է, որ ռազմական ոլորտում առաջին հերթին անհրաժեշտ է սպաների քաղաքացիական կրթության և գիտակցության աստիճանի բարձրացումը (Մուրադյան 168): Նման քաղաքացիական իշխանության ձևավորման համար անհրաժեշտ է բավարարել նվազագույնը երեք պայման. առաջին՝ զինվորականությունը չպետք է ունենա քաղաքական իշխանության կառավարման լծակներ, երկրորդ՝ քաղաքացիական վարչակարգում զինվորականությունը պետք է զբաղվի միայն մասնագիտական-արհեստավարժ գործառույթների իրականացմամբ,

այլ խոսքով՝ զինված ուժերը չպետք է հնարավորություն ունենան սեփական կամքով մշակելու քաղաքականություն, որքան էլ լուրջ դերակատարում ունեն հատկապես երկրի պաշտպանական քաղաքականությունը մշակելու և իրականացնելու գործում, երրորդ՝ զինվորականները պետք է անվերապահորեն ենթարկվեն քաղաքացիական իշխանություններին նույնիսկ հակընդդեմ շահերի առաջացման դեպքում» (Janowitz 3-4):

Զինծառայողների քաղաքական գիտակցության հիմնախնդիրները ՀՀ-ում

Քննարկվող հարցի արդիականության և ավելի ազնիվ գտնվելու դեպքում՝ ՀՀ-ի համար հրատապության համատեքստում պետք է նշել, որ ժամանակակից տեխնիկական, տեղեկատվական և տեխնոլոգիական միջոցները ստեղծել և տալիս են այնպիսի հնարավորությունների ու գործիքակազմի լայն հնարավորություն, որ պատերազմների (մարտական գործողությունների) ընթացքում յուրային զորքերի մարտունակության անհրաժեշտ բավարար մակարդակի ապահովման տեսանկյունից մեծապես և էապես կարևոր դերակատարում է տրվում նաև հոգեբանական, ռազմաքաղաքական գաղափարախոսության՝ գիտակցության ասպեկտներին:

Այս ուղղությունը հնարավորություն է տալիս զինվորականների մոտ ձևավորել քաղաքական գիտակցության այնպիսի մակարդակ, որը կօժանդակի դիմակայել ավանդական արժեքների պղտորմանը և զարգացնել զինծառայողների բարոյական և կամային հատկությունները, որոնք անհրաժեշտ են մարտական պարտքը կատարելու համար (Самедова 352): Պետք է նաև նշել, որ այս համատեքստում ազգային պատկանելությունը էական չէ. տեսամեթոդական սկզբունքները մեծապես համընդհանուր են, և անկախ նրանից, թե հետազոտողները որ հետազոտությունը որ ազգին են նվիրել, բազային, համընդհանուր տրամաբանությունը վերաբերվում է բոլորին, այդ թվում՝ հայերին:

Անհրաժեշտ է ընդգծել, որ զինծառայողների նկատմամբ, անկախ զբաղեցրած պաշտոնից, կոչումից և հաստիքից, աշխարհի տարբեր երկրներում կիրառվում են ամենատարբեր սահմանափակումներ, այդ թվում՝ Հայաստանում: ՀՀ-ում, ի թիվս այլ օրենքների և իրավական այլ փաստաթղթերի, այն կարգավորվում է ՀՀ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով: Մասնավորապես, վերոնշյալ օրենքի 8-րդ հոդվածը կարգավորում է զինծառայողների նկատմամաբ կիրառվող սահմանափակումները, որոնցից հետազոտության նպատակի տեսանկյունից առավել ուշագրավ են 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 6-րդ կետերը.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում զբաղեցնելու ընտրովի կամ այլ պաշտոններ, բացառությամբ սույն օրենքով սահմանված զինվորական պաշտոնների:

3) ստեղծելու կուսակցություններ կամ կրոնական միավորումներ, անդամակցելու որևէ կուսակցության կամ արհեստակցական միության, իսկ կրոնական միավորման անդամ հանդիսանալու դեպքում զինվորական ծառայության ընթացքում և ծառայակիցների շրջանում իրականացնելու քարոզչական գործունեություն:

6) պաշտոնեական դիրքն օգտագործելու ի շահ կուսակցությունների, կրոնական, հասարակական կազմակերպությունների և դրանց գործունեության օգտին իրականացվող քարոզչության (ՀՀ օրենքը «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին»): Հետաքրքրական է նաև այն փաստը, որ 11.04.2023 թ. ՀՀ Սահմանադրական դատարանը զինծառայողի՝ արհեստակցական միության անդամ լինելու բացարձակ արգելքը ճանաչել է ՀՀ Սահմանդրությանը հակասող (ՀՀ սահմանադրական դատարանի որոշում – 1683, 43) :

Ընդհանրացնելով վերոնշյալը՝ պետք է նշել, որ ինչպես հասարակական լայն շերտերի, այդ թվում՝ նաև մասնագիտական շրջանակներում, կան կարծրացած, անգամ քննարկման չենթակա մոտեցումներ, որ զինծառայողը չունի կամ չպետք է

ունենա քաղաքական գիտակցություն: Լայն և դասական իմաստով՝ «զինծառայող»-ի ու «քաղաքական»-ի բոլոր հարաբերություններն անընդունելի են և արգելված նորմատիվ իրավական մի շարք փաստաթղթերով ինչպես Հայաստանում, այնպես էլ՝ աշխարհում: Մինչդեռ պետք է նկատել առնվազն 2 շատ կարևոր հանգամանք.

1) զինծառայողներին, անկախ ժամեկտային թե պայմանագրային տիպից, նորմատիվ իրավական փաստաթղթերով թույլատրված է մասնակցել ընտրություններին, որն այլ ինչ է, քան ուղղակի կերպով արտահայտվող քաղաքական վարք, որն առանց քաղաքական գիտակցության հնարավոր չէ, և փոքր ինչ ծայրահեղացնելու դեպքում կարող ենք ասել, որ քաղաքական գիտակցությամբ պայմանավորված քաղաքական վարք չդրսևորելը ևս քաղաքական գիտակցության տեսակ է, ընդ որում՝ կարող է անգամ հանգեցնել աբսենտիզմի, որը ևս պետական համակարգի, այդ թվում՝ անվտանգային համակարգի համար կարող է չափազանց վտանգավոր լինել: Այստեղ պետք է նշել նաև, որ ի տարբերություն ՀՀ-ի՝ կան մի շարք երկրներ, որտեղ սահմանափակված է նաև համապետական կամ ամբողջական ընտրություններում մասնակցությունը, օրինակ՝ Թուրքիայում, Բրազիլիայում, Պարագվայում, Ինդոնեզիայում, Հորդանանում, Մարոկկոյում, Թունիսում, Դոմինիկյան Հանրապետությունում, Կոլումբիայում, Հոնդուրասում և Գվատեմալայում (Մելքոնյան 14) :

2) Եթե անգամ տեսական մակարդակում հիպոթետիկ ընդունենք այն մտայնությունը, թե զինծառայողները չունեն կամ չպետք է ունենան «քաղաքական գիտակցություն» լայն իմաստով՝ քաղաքական գիտակցություն տերմինի նախկին բովանդակային ծանրաբեռնվածության տարածված թերի մեկնաբանումը նկատի ունենալով, ապա անգամ այդ դեպքում անհրաժեշտ է հետազոտել զինծառայողների քաղաքական գիտակցությունը, քանի որ եթե անգամ պարբերացնենք և հետազոտությունից կատեգորիկ կերպով դուրս թողնենք բուն ծառայության ընթացքը, ապա առնվազն պետք է փաստենք, որ զինծառայողը մինչև զինծառայող դառնալը, ինչպես նաև ծառայության ավարտից հետո ընդամենը մարդ է՝ մարդուն բնորոշ բոլոր ֆիզիկական և մտավոր հատկանիշներով՝ անգամ հաշվի առնելով օրենքներով սահմանված արգելքները, ամեն դեպքում անկարելի է չհամաձայնել ժողովրդական այն խոսքի հետ, որ միտքն ու ոգին բանտարկել հնարավոր չէ: Միով բանիվ, եթե անգամ սահմանված են սահմանափակումներ քաղաքական գործունեությամբ (կուսակցական գործունեությամբ) զբաղվելու որոշ տեսակների նկատմամաբ, ապա քաղաքական գիտակցություն ունենալու մասով սահմանափակումներ հնարավոր չեն: Յուրաքանչյուր ոք այս յուրահատուկ մտավոր որակի կրողն է, որի վրա հիմնվում է սեփական անձի (եսի) ըմբռնումը (Нигматзянова):

Քննության առնելու համար զինծառայողների քաղաքական գիտակցության հիմնախնդիրները կամ առավել կտրուկ հարցն առաջնային քննության առնելու դեպքում մտայնությունը՝ արդյոք զինծառայողները ունեն, պետք է կամ կարող են առհասարակ ունենալ քաղաքական գիտակցություն, պետք է կատարել մի շարք եզրույթների հստկեցում և պարզաբանում: Մասնավորապես, այդ շարքում կարող ենք դիտարկել **զինծառայող, քաղաքական վարք, քաղաքական մշակույթ, քաղաքական սոցիալականացում, քաղաքական գիտակցություն** և մի շարք այլ երզրույթներ և երևույթներ, որոնք կարող ենք անկյունաքարային համարել թեմայի հետազոտման տեսանկյունից:

Քաղաքական գիտակցության տեսակների դասակարգման տեսանկյունից կան բաժանման մի քանի հիմքեր, սակայն մեզ հետաքրքրող տեսանկյունից պետք է առանձնացնել քաղաքական գիտակցության **առօրյա կենցաղային** և **պետական** (որոշ դեպքերում կիրառվում է **տեսական, գիտական կամ պրոֆեսիոնալ** տերմինը) մակարդակները: Պետք է նաև նշել, որ զինծառայողների դեպքում, կարծում ենք, առավելապես գործ ունենք առօրյա կենցաղային տիպի հետ՝ կադրային զինվորականների դեպքում ռազմակրթական համալիրի առանձնահատկություններից

ելնելով, իսկ պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող անձնակազմի տարիքը և կենսափորձը հիմնականում թույլ չեն տալիս ունենալ քաղաքագիտական հիմնավոր գիտելիքներ, **գիտական աշխարհայացք և պրոֆեսիոնալ (տեսական) քաղաքական գիտակցություն**:

Այստեղ, ի հաստատումն ասվածի, հետաքրքրական է նշել, որ հենց այս ամենը հասկանալով և հաշվի առնելով էլ ստեղծվել է աշխարհի բոլոր բանակներում գործող, տարբեր անվանումներով կիրառվող «Замполит», «политрук» «political officer» ևն ինստիտուտը, որը վերոնշյալ գործիքակազմի բացակայության պայմաններում պետք է զինծառայողների հետ տաներ գիտակցության բարձրացմանն ուղղված կրթադաստիարակչական համալիր աշխատանք:

Հետաքրքրական է, որ վերոնշյալ տրամաբանությամբ պայմանավորված և ի թիվս այլ եզրույթների իմաստային փոփոխություններով պայմանավորված է նաև ՀՀ-ում փոփոխվել համապատասխան ստորաբաժանման անվանումը՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով վարչությունից դառնալով բարոյահոգեբանական ապահովման վարչություն: Միով բանիվ, զինծառայողների քաղաքական գիտակցություն ասելով՝ այսօր մեծապես նկատի ունենք գաղափարախոսական, արժեհամակարգային դաստիարակության, ոգեղենության, հանուն հայրենիքի և պետության մարտական խնդիրը կատարելու պատրաստ լինելու հոգեբանական, գաղափարական և գիտակցական վիճակը, որը նաև ուղղակի կամ անուղղակի կերպով, բնականաբար, ազդում է ընտրությունների ժամանակ զինծառայողի կողմից կատարվող քվեարկության վրա (իշխանություն ձևավորելու գործընթաց), քանի որ այլ կերպ զինծառայողը չի կարող ներգրավվել քաղաքական կյանքին:

Եզրակացություն

Սույն հոդվածի շրջանակներում կատարված ուսումնասիրության արդյունքում արձանագրենք, որ շուրջ մեկ դար աշխարհի տարբեր ուղեղային կենտրոններում քննարկվում են զինծառայողների հատուկ կարգավիճակի և քաղաքական գիտակցության հիմնախնդիրները:

ՀՀ ռազմավարական պլանավորման համար էական նշանակություն ունի գործող գաղափարական պատկերացումների և օրենսդրական կարգավորման արմատական վերանայումը, քանի որ խորհրդային մոդելի աղճատված կիրառումը իր անկենսունակությունը հաստատեց 44-օրյա պատերազմի ժամանակ:

Ցայսօր մեր հասարակական դիսկուրսում զինծառայողների քաղաքական գիտակցության և գիտական աշխարհայացքի ձևավորման տարակարծությունները ցույց են տալիս, որ առկա են լուրջ խնդիրներ վերոնշյալ ոլորտում, և անհրաժեշտ են կտրուկ քայլերի իրականացում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Ազգային ժողով. «*Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին*» ՀՀ օրենք. 15 Նոյեմբերի 2017.
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=117633:

2. Գասպարյան, Աբրահամ.«Ռազմաքաղաքացիական հարաբերությունների փոխակերպումը հետսառըպատերազմյան Թուրքիայում».*Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն*, h.18, N 3, 2015, էջ 17-30:

3. Ղևոնդյան, Ալեն. «Անվտանգային ռիսկերի տեսահայեցակարգային մեկնաբանությունը մասնագիտական դիսկուրսում». *Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն*, h. 32, N. 2, 2020, էջ 42-50:

4. Մելքոնյան, Արաքս. *Հայաստանի Հանրապետությունում զինծառայողների ընտրական իրավունքների իրացման խնդիրներ*, Երևան, 2016:

5. Մուրադյան, Գուրգեն. «Քաղաքական վերնախավի և զինված ուժերի փոխհարաբերությունների հիմնախնդիրները Հայաստանի Երրորդ Հանրապետությունում 2015-2020 թթ. (Կովկասյան արդի գործընթացների համատեքստում)». *Կովկասյան տարածաշրջան. պատմություն, քաղաքականություն և մշակույթ միջազգային գիտաժողովի հոդվածների և զեկուցումների ժողովածու*, Երևան, 2023, էջ 156-171:

6. ՀՀ Սահմանադրական դատարան. *1683 որոշում*, 11 Ապրիլի 2023, https://www.concourt.am/decision/decisions/643960cc1c1c6_s
dv-1683.pdf:

7. Бобкова, Елена. «Аспекты проблемы политического воспитания военнослужащих Советской армии в послевоенный период (май 1945 – первая половина 50-х гг. XX века) в историографических и исторических источниках: историографический обзор» *Известия ПГПУ им. В. Г. Белинского*, н. 23, 2011, стр. 321-325.

8. Клаузевиц, Карл. *О войне*, Москва, 2018.

9. Денисенко, Вадим и Катранджиев, Валентин,. «Сэмюэл Хантингтон о военно-гражданских отношениях во внешнеполитической стратегии США». *Вестник Российского университета дружбы народов. Серия: Международные отношения*, н. 1, 2001, стр. 42-48.

10. Нигматзянова, Айгуль. «Понятие политического сознания в современном обществе». *Исторические, философские, политические и юридические науки, культурология и искусствоведение. Вопросы теории и практики*. Тамбов, н. 1, 2016, стр. 115-118.

11. Орлов, Игорь. *Воспитание метких стрелков. Из опыта партийно-политической работы в стрелковых частях и подразделениях*. Москва, 1954.

12. Самедова, Юлия. «Политическое воспитание военнослужащих: историко-педагогический аспект» *Социальная компетентность,* т. 4, н. 4, 2019, стр. 352-362.

13. Хантингтон, Самюэль. «Вооруженные силы и демократия. Реформирование военно-гражданских отношений». *ПОЛИТНАУКА*, http://www.politnauka.org/library/dem/hant.php

14. Buzan, Barry, et al., *Security: New Framework for Analysis*. London, 1998.

15. Buzan, Barry. *People, States and Fear: the National Security Problem in International Relation*, Brighton, Sussex: Wheatsheaf, 1983.

16. Huntington, Samuel, *The Soldier and the State: The Theory and Politics of Civil-Military Relations*, New York: Belknap Press, 1957.

17. Janowitz, Morris. *The Military in the Political Development of New Nations: An Essay in Comparative Analysis*, Chicago, 1964.

WORKS CITED

1. HH orenqy «Zinvorakan tsarayutyan ev zintsarayoghi kargavichaki masin», [RA Law "On Military Service and the Status of Servicemen"], https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=117633 20.04.2023 (In Armenian)

2. Gasparyan Abraham, Razmaqaghaqaciakan haraberutyunneri poxakerpum@ hetsar@paterazmyan Turkiayum, Banber Yerevani hamalsarani. Mijazgayin haraberutyunner, Qaghaqagitutyun, [National Security Discourse and the Constitutional-Political Status of NSC in Post-Cold War Turkey in the Context of Civil-Military Relations, Bulletin of Yerevan State University, International Relations, Political Science"] Yerevan, № 3 (18), 2015. (In Armenian)

3. Ghevondyan Alen, Anvtangayin riskeri tesahayecakargayin meknabanutyun@ masnagitakan diskursum, Banber Yerevani hamalsarani. Mijazgayin haraberutyunner, Qaghaqagitutyun [Theoretical and Conceptual Definition of Security Risks in Professional

Discourse., Bulletin of Yerevan State University, International Relations, Political Science"] Yerevan, 2020, № 2 (32). (In Armenian)

4. Melkonyan Araks, Hayastani Hanrapetutyunum zintsarayoghneri yntrakan iravunkneri iracman xndirner [Problems of Exercising Electoral Rights of servicemen in the Republic of Armenia"] Yerevan, 2016. (In Armenian)

5. Muradyan Gurgen., Qaghaqakan vernaxavi ev zinvats uzheri poxharaberutyunneri himnaxndirner@ Hayastani Errord Hanreptutyunum 2015-2020 tt. (Kovkasyan ardi gorts@ntacneri hamateqstum, Kovkasyan taratsashrjan. Patmutyun, qaghakakanutyun ev mshakuyt mijazgayin gitazhoghovi hodvatsneri ev zekucumneri zhoghovatsu [Issues of Relations of the Political Elite and the Armed Forces in the Third Republic of Armenia in 2015-2020 in the Context of Current Processes of the Caucasus Region, Caucasian Region: History, Politics, Culture, Collection of Articles and Reports of the International Conference"] Yerevan, 2023. (In Armenian)

6. Bobkova Elena Yurevna, Aspekti problem politicheskogo vospitaniya voennasluzhashchix Sovetskoy armii v poslevoenniy period (may 1945-pervaya polovina 50-x gg. XX veka) v istoriograficheskix I istoricheskih istochnikax: istoriograficheskiy obzor// Izvestiya PGPU im. V. G. Belinskogo. 2011, n. 23 [Some Aspects of Soviet Army Servicemen's Political Education in Postwar Period of the XX Century (may 1945 first half of the 50-ths) in Historic Literature: historic review // Izvestia Penzenskogo gosudarstvennogo pedagogicheskogo universiteta imeni V. G. Belinskogo, Humanities, № 23, 2011"] (In Russian)

7. Denisenko Vadim, Katrandzhiev Valentin, Semyuel Xantington o voenno-grzhdanskix otnosheniyax vo vneshnepoliticheskoy strategii SSHA, Vestnik Rossiyskogo universiteta druzhbi narodov. Seriya: Mezhdunarodnye otnosheniya, 2001, n. 1 [Samuel Huntington about the Civil-Military Relations of the US Foreign Policy Strategy // Theory and History of International Relations Chair Peoples' Friendship University of Russia, 2001, v. 1, "] Moscow, Russia. (In Russian)

8. Nigmatzyanova Aygul, Ponyatie politicheskogo soznaniya v sovremennom obshchestve https://www.gramota.net/materials/3/2016/1/29.html 20.04.2023 [Conflictogenity in the Contemporary Russian Society"] https://www.gramota.net/materials/3/2016/1/29.html 20.04.2023 (In Russian)

9. Orlov Igor', Vospitanie metkix Strelkov. Iz opita partiyno-politicheskoy raboti v strelkovix chastyax I podrazdeleniyax, Moskva, 1954. [Education of Well-aimed Shooters. From the Experience of Party Political Work in Rifle Units and Subunits"] Moscow, 1954. (In Russian)

10. Samedova Yulya Aleksandrovna., Politicheskoe vospitanie voennosluzhashchix: istoriko-pedagogicheskiy aspekt// Socialnaya kompetentnost, 2019, t. 4, n. 4 [Political Education of Military Personnel: Historical and Pedagogical Aspect // Social competence, 2019, v. 4, n. 4 "]. (In Russian)

11. Xantington Samyuel, Vooruzhennie sili I demokratiya, Reformirovanie voenno-grazhdanskix otnosheniy [Armed Forces and Democracy, Reforming Civil-Military Relations"], http://www.politnauka.org/library/dem/hant.php, 20.04.2023, (In Russian)

SPECIAL STATUS OF ARMED FORCES PERSONNEL IN THE CONTEXT OF POLITICAL AWARENESS AND PARTICIPATION

DAVIT TOROSYAN

Yerevan State University, Faculty of International Relations,
Department of Political Science, Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia

The purpose of this article is to highlight the changes in the political consciousness of military personnel in the context of current regional and global changes.

The task of the work is to analyze the political consciousness of the military personnel of the Republic of Armenia, taking into account the challenges posed by the new internal and external situation created after the 44-day war.

The work was written with a joint consideration of the facts, using the principles of historical analysis.

As a result of the study, it can be stated that even in the post-World War II period, the problem of the political consciousness of military personnel, as well as the study of the relationship between the political and military elites, were of particular importance. in Western and Soviet world systems. After the "cold war" and the proclamation of the independence of the Republic of Armenia, the above-mentioned problems are in the sphere of first necessity for us. During the conducted research, it was revealed that in the Armenian reality there is a lack of interest on the part of the research community towards this topic. In fact, there is an insufficient level of elaboration of the topic, which, in turn, leads to a number of problems on the ground in real life.

The study of the legislative sphere of the Republic of Armenia shows that there are a number of gaps that require urgent improvement.

Key words: *soldier, army, armed forces, consciousness, political consciousness, civil-military relations, Republic of Armenia.*

ОСОБЫЙ СТАТУС ВОЕННОСЛУЖАЩИХ В КОНТЕКСТЕ ПОЛИТИЧЕСКОЙ ОСВЕДОМЛЕННОСТИ И УЧАСТИЯ

ДАВИД ТОРОСЯН

соискатель кафедры политологии факультет международных отношений Ереванскогогосударственногоуниверситета,

г. Ереван, Республика Армения

Цель данной статьи – осветить изменения в политическом сознании военнослужащих в контексте современных региональных и мировых перемен.

Задачей работы является анализ политического сознания военнослужащих Республики Армения с учетом вызовов, поставленных новой внутренней и внешней обстановкой, создавшейся после 44-дневной войны.

Работа выполнена при сопоставительном рассмотрении фактов, с применением принципов исторического анализа.

В результате проведенного исследования можно утверждать, что даже в период после Второй мировой войны проблема политического сознания военнослужащих, а также изучение взаимоотношений между политической и военной элитами имели особое значение в западной и советской мировых системах. После «холодной войны» и провозглашения независимости РА вышеназванные проблемы находятся для насна первом плане. В ходе проведенного исследования было выявлено, что в армянской действительности наблюдается отсутствие интереса со стороны исследовательского сообщества к данной теме. На самом деле существует недостаточный уровень проработки темы, что, в свою очередь, приводит к ряду проблем в реальной жизни.

Изучение законодательной сферы РА показывает, что имеется ряд пробелов, требующих срочной доработки.

Ключевые слова: *солдат, армия, вооруженные силы, сознание, политическое сознание, военно-гражданские отношения*, *Республика Армения.*